

## Մամլո հաղորդագրություն

### Համահայկական կրթական առցանց խորհրդածողովն արձանագրեց աննախադեպ բարձր մասնակցություն

Համահայկական կրթական առաջին առցանց խորհրդածողովը, որը տեղի ունեցավ 2020թ. օգոստոսի 22-24-ը, կազմակերպվել էր Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) առցանց ուսուցման առաջատար հաստատության՝ Հայկական վիրտուալ համալսարանի (ՀՎՀ) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) համատեղ ջանքերով:

Նախորդ ութ խորհրդածողովները տեղի էին ունեցել Հայաստանում երկու տարին մեկ անգամ՝ նպատակ ունենալով քննարկել արտերկրում հայկական կրթօջախների առջև ծառայած հիմնախնդիրները և Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդման, ինչպես նաև կրթության ոլորտում համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Համաշխարհային համավարակի պայմաններում, երբ գրեթե ամեն ինչ տեղափոխվեց առցանց տիրույթ, որոշում կայացվեց այս խորհրդածողովը ևս անցկացնել առցանց, ինչը վերացրեց աշխարհագրական սահմանները և ապահովեց առավել ընդլայնված մասնակցություն: Միասնական և կազմակերպված աշխատանքների արդյունքում խորհրդածողովի համաշխարհային լսարանն ընդգրկեց հայկական կրթական բնագավառի ավելի քան 1,300 ներկայացուցչի 36 երկրից՝ մանկավարժներ, կրթական հաստատությունների պատասխանատուներ, վարչական անձնակազմ, կրթության աջակիցներ: Թվով 9-րդ խորհրդածողովը դարձավ իր պատմության մեջ մասնակիցների թվով ամենամեծը և ընդգրկվածության առումով ամենաբազմազանը:

Բացման խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը շեշտեց նման խորհրդածողովների անհրաժեշտությունը՝ Հայաստանի և սփյուռքի միջև համագործակցային նոր հնարավորություններ ստեղծելու նպատակով, և շնորհակալություն հայտնեց ՀԲԸՄ-ին՝ հանձնելու ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության անդամ և ՀՎՀ-ի հիմնադիր նախագահ Երվանդ Ջորյանի՝ խորհրդածողովն այդքան ջանասիրաբար կազմակերպելու համար:

Իր ներածական ուղերձում դոկտ. Ջորյանը կարևորեց առցանց ուսուցման առանձնահատկությունը՝ մատնանշելով ՀՎՀ-ի կողմից առաջարկվող ժամանակակից ինտերակտիվ կրթական տեխնոլոգիաների բազմազանությունը՝ մատուցված դասավանդման յոթ լեզուներով, ինչի շնորհիվ 2009-ից ի վեր հայկական կրթությունը հասանելի է դարձել ավելի քան 25,000 էլ. սովորողների համար: Անգամ համաշխարհային համավարակի պայմաններում և, թերևս այդ պատճառով, ՀՎՀ-ն կրկին հանդես եկավ որպես առցանց ուսուցման առաջատար հաստատություն՝ հարստացնելով իր գործունեության շրջանակներում առաջարկվող ծրագրերի բովանդակությունը՝ օգնելու հաղթահարել կրթական ոլորտին պատուհասած մարտահրավերներն ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում, ապահովելու վիրտուալ ինտերակտիվ հաղորդակցությունն մասնակիցների միջև ամբողջ աշխարհում:

Ենթյա խորհրդածողովը, որը կրում էր «Հայաստան-սփյուռք համագործակցությունը COVID-19-ի պայմաններում. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագիրը,

համախմբեց հյուր-բանախոսների և խոսնակների կրթական տարբեր ոլորտներից: Շուրջ 33 կրթության փորձագետներ ամբողջ աշխարհից կիսեցին իրենց աշխատանքային փորձը, ծրագրերն ու առաջարկները, իսկ հյուր-բանախոսները շարունակեցին այս թեման ամենօրյա «Հեռանկարային գրույցներ»-ում՝ ներկայացնելով իրենց տեսլականը, գործունեությունը, ինչպես նաև խնդիրները և հնարավոր լուծումները: Նրանցից յուրաքանչյուրն առաջատար դեր է զբաղեցնում իր երկրի համայնքային կյանքում և կրթության համակարգում, այդ թվում՝ Ազատուհի Սիմոնյանը (Արցախ), Ռազմիկ Փանոսյանը (Պորտուգալիա), Վերապատվելի Փոլ Հայդոստյանը (Լիբանան), Սեբուհ Սալանյանը (ԱՄՆ), Արփի Մանուկյանը (Թուրքիա), Գայանե Թումբալյանը (Սիրիա), Մալբի Ղազարյանը (ԱՄՆ), Մարի Գյուլումյանը (ԱՄՆ), Արա Վասիլյանը (Լիբանան) և Տաթևիկ Այվազյանը (Մեծ Բրիտանիա):

Հատկանշական է, որ խորհրդաժողովի ֆեյսբուքյան ուղիղ հեռարձակումը հիանալի հնարավորություն էր բազմաթիվ ուսուցիչների, տնօրենների և վարչական պատասխանատուների համար՝ ակտիվորեն մասնակցելու քննարկումներին, լսելու գործընկերներին, ներկայացնելու իրենց կարծիքները: Շատերը հատուկ մտահոգություն էին հայտնում նոր սերունդների հայոց լեզվի ուսուցման համար: Դոկտոր Զորյանն առաջարկեց քննարկումները շարունակել խորհրդաժողովի առցանց հարթակում՝ այս կերպ ստեղծելով առավել սերտ համագործակցության, մտքերի ու փորձի փոխանակման և գործնական քայլերի մշակման, համակարգման, իրագործման հնարավորություններ: Նրա առաջարկությունը դրական արձագանք ստացավ մասնակիցների կողմից, ովքեր նաև փնտրում էին իրենց գաղափարները, մոտեցումները և առաջարկները մի միասնական միջավայրում ներկայացնելու արդյունավետ ուղիներ:

Փակման արարողության ընթացքում ելույթով հանդես եկավ ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը: Նա իր խոսքում շեշտեց այն, որ 114 տարի շարունակ կրթությունը եղել է ՀԲԸՄ-ի առաջնահերթությունը, և այդ նույն հեռանկարով այսօր ՀԲԸՄ-ն շարունակում է ներդրումներ կատարել նորարարական ծրագրերում և աջակցում է աշխարհի տարբեր երկրներում ապրող հայերի զարգացող կարիքներին: Պերճ Սեդրակյանը նաև բարձր գնահատեց դոկտոր Զորյանի տեսլականը և իր թիմի ջանքերը՝ ուղղված ՀՎՀ-ի առաքելության իրագործմանը՝ օգտագործելով տեխնոլոգիական առաջընթացը՝ ի շահ հայ մանկավարժների և նրանց վստահորդների:

Հայաստանի սփյուռքի հարցերով գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը և ԿԳՄՍ փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը նույնպես միացան իրենց գործընկերներին՝ ընդգծելով ՀՎՀ-ի և ԿԳՄՍՆ-ի կազմակերպչական համակարգված ջանքերը, մաղթելով շարունակական հաջողություններ հայկական կրթությունն ու մշակույթն աշխարհում տարածելու գործում:

Համահայկական 9-րդ խորհրդաժողովի գլոբալ ազդեցությունը պետք է խթան հանդիսանա բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են պահպանել, հարստացնել և տարածել հայկական կրթությունը:

ՀՎՀ-ի համահայկական խորհրդաժողովի առցանց քննարկման հարթակին կարելի է միանալ <https://avc-agbu.org/edu/avc-escs-diaspora-conference/registration.html> հղումով: Այստեղ հասանելի են նաև աշխատաժողովների օրակարգը, տեսագրությունները, ֆորում-քննարկումները և ավելին:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) աշխարհի ամենամեծ շահույթ չհետապնդող հայկական կազմակերպությունն է, որը նվիրվել է հայկական ժառանգության պահպանմանը՝ կրթական, մշակութային ու մարդասիրական ծրագրերի միջոցով: Ամեն տարի

ՀԲԸՄ-ն իր աջակցությունն է բերում 500,000 հայերի Հայաստանում, Արցախում և սփյուռքում: 1906թ.-ից ի վեր ՀԲԸՄ-ն հավատարիմ է մնացել իր կոչումին՝ համայն հայության բարգավաճմանը նպաստող հիմքերի ստեղծմանը: ՀԲԸՄ-ի աշխարհասփյուռ գործունեությանը ծանոթանալու և ավելին իմանալու համար կարող եք այցելել <http://www.agbu.org>: